ԳԱՐԵԳԻՆ Բ ՎԵՀԱՓԱՌ ՀԱՅՐԱՊԵՏԻ ԲԱՆԱԽՈՍՈՒԹՅՈՒՆԸ «ՀԱՅԱՍՏԱՆՅԱՅՑ ԱՌԱՔԵԼԱԿԱՆ Ս. ԵԿԵՂԵՑԻՆ 21-ՐԴ ԴԱՐՈՒՄ» ԹԵՄԱՅՈՎ

Դեկտեմբերի 23-ին «Թեքեյան» մշակութային կենտրոնում ՀՌԱԿ հանրապետական վարչությունը կազմակերպել էր կլոր սեղան՝ «Հայաստանյայց Առաքելական Ս. Եկեղեցին 21-րդ դարում» թեմայով:

Քննարկումներին հրավիրված էր Ն.Ս.Օ.Տ.Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսը: Նորին Սրբությունը հանդես եկավ այս հարցին նվիրված բանախոսությամբ:

Վեհափառ Հայրապետն անդրադարձավ Հայ Եկեղեցու կողմից գերակայություններ նկատվող խնդիրներին՝ որպես այդպիսիք ներկայացնելով համայնքային կյանքի ձևավորման և եկեղեցաշինության, քրիստոնեական դաստիարակության, սոցիալական ծառայության ոլորտները: Հայոց Հայրապետը գերակա խնդիրների շարքում դասեց նաև Հայ Եկեղեցու կանոնադրության հաստատումը, որի մշակման աշխատանքները դեռևս ընթացքի մեջ են: Նորին Սրբությունն անդրադարձավ նաև Եկեղեցի-պետություն հարաբերություններին, ներկայացրեց Մայր Աթոռ Ս. Էջմիածնի՝ Հայ Եկեղեցու Նվիրապետական Աթոռների հետ ներկայիս հարաբերությունները:

Հավարտ բանախոսության Վեհափառ Հայրապետը պատասխանեց ներկաների հարցերին:

ՄԱՅՐ ԱԹՈՌ Ս. ԷՋՄԻԱԾՆԻ
ՏԵՂԵԿԱՏՎԱԿԱՆ ՀԱՄԱԿԱՐԳ